# ՅՈԲԵԼԵԱՆ
## ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
### ԳՐԱԿԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

*Բարիզի մէջ կազմուած է Յոբել. Կդրնկն. Յանձնաժողով 44 անձերէ, Պրոֆ. Ն. Ադոնցի նախագահութեան ներքև, «յառաջիկայ աշնան մեծ հանդիսութեամբ մը տօնելու համար Պրն. Աւետիս Ահարոնեանի գրական կեանքին քառասնամեայ Յոբելեանը:»*

*Յոբել. Կեդրնկն. Յանձնաժողովին «գիտակցութիւնն է այս առիթը օգտագործել՝ հրատարակելու համար Ահարոնեանի եթէ ոչ բոլոր երկերը, գոնէ կարևորագոյնները, որոնք այսօր սպառած են, և միանգամայն ստեղծել Գրական Հիմնադրամ մը, որուն հասոյթը ծառայէ հայ գրականութեան մեծարժէք վաստակաւորներու կենսաթոշակներ հաստատելու, սկսելով Ահարոնեանէ: Ուրիշ խօսքով Կեդրոնական Յանձնաժողովին ցանկութիւնն է Ահարոնեանի Յոբելեանը մշտնջենապէս ծառայէ Հայ Գրականութեան, և Յանձնաժողովը կոչ կ'ուղղէ ընդհանուր Հայութեան, որպէս զի կարենայ արժանաւորապէս իրագործել իր այս առաջադրութիւնը»:*

*Սրտանց կը ձայնակցինք այս կոչին, և յուսով ենք որ հայութիւնը պիտի իրագործէ այդ կոչին նպատակը:*

*Ահարոնեան մեր նոր հայ-գրականութեան կախարդիչ և բեղմնաւոր գրիչներէն մէկն է, տոգորուած վա՛ռ երևակայութեամբ, լարուած հայրենասիրական բարձր զգացումներով, որ սերունդ մը խանդավառած է իր մշակած գրականութեան այլևայլ ճիւղերով:*

*Ահարոնեան Կովկասցի է, բայց իբրև գրագէտ շատ աւելի մօտեցած է Կ. Պոլսոյ ոճին, գնահատելով անոր աշխոյժ, զուսպ և պատշէն արտայայտումը, և իր գրչէն այս արևելեան և արևմտեան աշխարհաբարներու զուգաւորումներուն հըմայքը պատճառ եղած է որ, Րաֆֆիէն ետքը, ամէնէն շատ կարդացուած գրագէտն ըլլայ Ահարոնեան մեր երիտասարդութեան կողմէն:*

*ՍԻՈՆ հաճոյքով կ'ողջունէ բանաստեղծ և գրագէտ Ահարոնեանի քառասնամեայ գործունէութեան Յոբելեանը, մաղթելով որ իր աչքերուն լոյսը առատ ըլլայ, Աւետարանի բացատրութեամբ, որպէս զի չարունակէ փայլեցնել իր ոսկի գրիչը:*

*Յոբել. Կեդրնկն. Յանձնաժողովը իր մէջէն ընտրած է գործադիր մարմին մը, ինը անդամներով, դարձեալ Պրոֆ. Ն. Ադոնցի նախագահութեան տակ, տեսնելու համար Յոբելեանի պատրաստութիւնները:*

*Բոլոր գրութիւնները ուղղել նախագահ Պրոֆ. Ն. Ադոնցի հասցէով.*

Prof. N. ADONTZ
71, Avenue Kléber, PARIS (16e), FRANCE.

*Իսկ դրամական առաքումները՝ Գանձապահ Պ. Արմենակ Համբարձումեանի հասցէով:*

Mr. ARM. HAMPARTZOUMIAN
53, Faubourg Montmartre PARIS (9e), FRANCE.

digitised by A.R.A.R.@

# ՍԻՐՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1929-Ի ՀԱՄԱՐ

Կ. ՊՈԼՍԷՆ՝ Գեր. Տ. Սմբատ Եպս. Գաղազեան՝ Ս. Փրկչի Հիւանդանոցին՝ Կ. Պոլիս։

ՓԱՐԻԶԷՆ՝ Խամճեան Եղբարք՝ Հայ Որբա. Միութեան՝ Ջակաղիկ.— Նազարէթ Մանուշակեանի՝ Հալէպ.— Դաւիթ Պարսումեանի՝ Հալէպ.— St. Georges Schoolի հայ ուսանողութեան՝ Երուսաղէմ։

ՄԱՐՍԷՅԼԷՆ՝ Նշան Ջիւրիւքճիեան՝ Տ. Ներսէս Քհնյ. Մելգոնեանի՝ Վառնա։

ՆԻՍԷՆ՝ Երուանդ Եասյեան՝ Հայոց Եկեղեցւոյն՝ Հայֆա։

ՎԻԷՆՆԱՅԷՆ՝ Երուանդ Ջատէեան՝ Կեդր. Վարժարանին՝ Կ. Պոլիս։

ՉԻՔԱԿՕՅԷՆ՝ Կ. Մ. Ալիքսանեան՝ Պետրոս Տէտէեանի՝ Կ. Պոլիս։

St. PITTSBURGH-էն՝ Օր. Հ. Ներսէսեան՝ Գալֆայեան Որբանոցին՝ Կ. Պոլիս։

ԴԱՄԱՍԿՈՍԷՆ՝ Տ. Սուրէն վրդ. Քէմհաճեան՝ Տ. Պաւղ Քհնյ. Խաչիկեանի՝ Գահիրէ.— Վահրամ Վարժապետեանի՝ Պէյրութ.— Ազգ. Վարժարանին՝ Դամասկոս։

ՀԱԼԷՊԷՆ՝ Արմէն Մազըմեան՝ (Պարոն) Հայոց Եկեղեցւոյ՝ Պէյլան.— Հայոց Եկեղեցւոյն՝ Արաբ-Բունար.— Հայոց Եկեղեցւոյն՝ Պապ։

ՕԼՄԼԷՆ՝ Լեւոն Պրուսալեան՝ Խօժէն Սիւրմէլեանի՝ Olive View. Calif.

## ՍՏԱՑՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

1. **Ջահակիր**, գրական, գեղարուեստական պարբերաթերթ, առ այժմ լոյս կը տեսնէ ամէն ամսոյ սկիզբը եւ վերջը, Պէյրութ.— Տնօրէն-Խմբագիր՝ Վարդան Գէորգեան։ Բաժանորդագրութիւն, Սուրիա՝ Տարեկան 20 փրանք, Արտասահման՝ 1 Տօլար։ Հասցէ՝ Rédaction Tchahaguir, Rue Kasti 33, Beyrouth։

2. **Զուարթնոց**, պարբերաթերթ **Գրականութեան եւ Գեղարուեստի** (Տարեկան չորս թիւ)։ Առաջին Տարի. Յունուար 1929. Տպ. **Տարօն**, Փարիզ. Բաժնեգին. 10 թիւի համար 3 տօլար։ Հասցէ. Hrant Palouian, B. P. N° 50 Paris (10e), France։

3. MASSIS, an organ of Armenian Interests, Volume I. N° 1. November, 1928. Annual subscription 12 shillings.
   Subscription and all communications affecting this peridoical should be addressed to the Editor, «Massis», 54 Bernard Street, London, W. C. I.

4. LE FOYER, organ des Arméniens Réfugiés en France, Paressant le 1er et le 15 de chaque mois, Directeur: H. D. N. MASSIS. Abonnements: Populaire 25 frs. par an: Spécial, 100 frs. par an. Adresee: 208bis, Rue Lafayette, Paris (10e), France.

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

1. **Պարզ Քարոզներ**, գրեց Ղեւոնդ Եպս. Դուրեան, Հոգեւոր Հովիւ Մանչեսթրի. **Գ. Հասօր**, (Բ. Տպագրութիւն). Տպ. «Մասիս», Փարիզ, 1929, 8° էջ 379.— Գին՝ Շիլին 3. 6.։

2. **Թէօդիկ, Ամէնուն Տարեցոյցը**, 23րդ Տարի, 1929, Տպգր. **Մասիս**, Փարիզ, 8° էջ 528. Գին 2 Տոլար՝ Ամերիկայի համար. Եւրոպայի եւ այլ երկիրներու համար 50 ֆրանք։ Ամերիկայի հասցէ V. Théotig c/o Arménian Educational Foundation, 31, Fourth Ave. New York. U. S. A.։ Եւրոպայի հասցէ. Imprimerie Massis, 208bis, Rue Lafayette, Paris (10me), France։

3. **Ե. Գ. Ազարօն, Հողագէտ**, Ինչպէս կը ճանչնամ **Նուպարաշէնը**. Երեք պատկերով եւ մէկ յատակագիծով. Տպգր. 1929, Փարիզ, **Գեղարուեստական Հայ Տպարան**, 8° էջ 35։

4. **Մաուել Թինէր, Հեյլէ**, Թարգմանեց **Աստրինէ Ն. Լօմակէօզեան**, Տպգր. «Կիւթէմպէրկ» Կ. Ն. Մազաճեան, Կ. Պոլիս 1928. 8° էջ 256 + 2. Գին 80 Ղրշ.։

5. **Գրպանի Ընդարձակ Օրացոյց** 1929. Ը. Տարի, պատրաստեց Դանիէլ Յ. Ռազկրատեան. Սօֆիա-(Պուլկարիա), Տպարան-Արաքս-Սօֆիա. 16° էջ 160. Գին 25 Լէվա։

6. Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւն. հիմնուած **1906**ին ի Գահիրէ եւ վերակազմուած 1924ին ի Լօզան.— Ընդհանուր Տեղեկագիր եւ հաշուեկշիռ 22րդ Շրջանի (1927)։ Տպ. «Մասիս», Փարիզ. մեծ 8° էջ 88։

7. **Հոսհոսի Տարեգիրքը** 1929, Ա. Տարի. Տպ. «Հոսհոս», Պէյրութ. փոքր 8°, էջ 128, Գին՝ 10 ֆրնս. ֆրանք։

8. **Ընդարձակ Տարեցոյց, Սեպհականութիւն Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի. 1929 Նոր Շրջան, Ե. Տարի**, կազմեցին **Մ. Զուհրեան — Թ. Ազատեան**, Տպգր. Յ. Մ. Սէթեան, Կ. Պոլիս, 8° էջ 346. Գին՝ 200 ղրշ. 30 ֆրանք։

digitised by A.R.A.R.@

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

Գեր. Մկրտիչ Եպս. Աղաւնունիի **ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ԱՅՑԵԼՈՒՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ** գործը։ Արդիւնք երկարատեւ պրպտումներու, որ կոչուած է հետաքրքրական պակաս մը լեցնել Հայ Երուսաղէմի պատմութեան մէջ։ Գործը յատուկ անուններու բառգիրք մըն է ըստ ինքեան, ու պիտի բովանդակէ 1500 է աւելի անուններ կենսագրական եւ պատմական տեղեկութիւններով ճոխացած։

Տպագրութենէն ետքը պիտի որոշուի գիրքին գինը։

**12րդ** ֆօրման տպագրուած է արդէն։

Անոնք որ կը փափաքին ունենալ այս գիրքը, կրնան այժմէն արձանագրել տալ իրենց անունը եւ հասցէն, դիմելով Տպարանիս Տեսչութեան։

DIRECTION DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE
JERUSALEM — PALESTINE


# ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1929-Ի ՀԱՄԱՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ՝ Տ. Բաբգէն Սրբազան՝ Կիւլէսէրեան Եղբարց՝ Արլինկթըն, Վահէ Կիւլէսէրեանին՝ Հալէպ, Կարապետ Պէրզուտեանին՝ Հալէպ.— Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան՝ Աւետիս Մուրատեանին՝ Նիս.— Տ. Յարութիւն Վրդ. Պարոնեան՝ Տ. Յարութիւն Քհնյ. Յովսէփեանին՝ Կալաց, Արամ Աստուրեանին՝ Կիպրոս.— Տ. Յովհաննէս Վրդ. Աստուրեան՝ Մանուէլ Աստուրեանին՝ Կ. Պոլիս.— Արամ Տասնապետեան՝ Տքթ. Արշակ Պօղոսեանին՝ Բարիզ.— Բիւզանդ Մելքոնեան՝ Մկրտիչ Տայիկեանին՝ Պէյրութ.— Խաչատուր Գըրագիրեան՝ Նշան Գալփաքեանին՝ Ռումանիա.— Հայկ Թումայեան՝ Տ. Յարութիւն Քհնյ. Թումայեանին՝ Նիկոսիա.— Նիկողոս Պէտէվեան՝ Երուսաղէմացի Հայոց Բարեսիրական Միութեան՝ Երուսաղէմ։

ՀԱԼԷՊԷՆ՝ Տ. Արտաւազդ Ծ. վրդ. Սիւրմէեան՝ Սամուէլ Գայնաքեանին՝ Հալէպ.— Տ. Ներսէս Ա. Քհնյ. Թավուգճեան՝ Աստուածատուր Կիւլէսէրեանին՝ Շիքակօ.—

ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ՝ Armenisches Hilfskomitee՝ Հայոց Եկեղեցիին՝ Սելանիկ, Հայոց Եկեղեցիին՝ Վառնա, Հայոց Եկեղեցիին՝ Հօմս, Հայոց Եկեղեցիին՝ Տրիպօլիս, Ազգ. Վարժարանին՝ Զահլէ, Կրթասիրաց Վարժարանին՝ Հալէպ, Եկեղեցասիրաց Միութեան՝ Հալէպ, N. E. Reliefի Որբանոցին՝ Անթիլիաս, Քէլէքեան Որբանոցին՝ Պէյրութ, Տ. Ժիրայր Քհնյ. Տօնիկեանին՝ Քավալա, Տ. Արսէն Քհնյ. Խաչոյեանին՝ Տրամա, Վիեննայի Մխիթարեանց Վարժարանին՝ Փլովտիվ (Պուլկարիա)։

ԲՐԱԿԱՅԷՆ՝ Զարեհ Զատէեան՝ Պեզճեան Վարժարանին՝ Կ. Պոլիս, Մանիսալեան Վարժարանին՝ Գահիրէ, Դպրոցասէր Տիկնանց Վարժարանին՝ Փարիզ, Սեմական Լեզուաց Վարժարանին՝ Բրակա։

ԼԱՒՈԴԻԿԷՆ՝ ՈՄՆ՝ Տ. Վարդան Քհնյ. Վարդերեսեանին՝ Հալէպ, Ազգ. Վարժարանին՝ Լաւոդիկէ, Համբարձում Երամեանին՝ Աղեքսանդրիա։

ԼՈՆՏՈՆԷՆ՝ Տ. Մերուժան Քհնյ. Խօսրովեան՝ Տ. Յուսիկ Քհնյ. Այանեանին՝ Պէյրութ, Տ. Յովհաննէս Քհնյ. Սիմոնեանին՝ Եափա։

ՍԱՆ ՖՐԱՆՉԻՍՔՈՅԷՆ՝ Խօսրով Բոէեան՝ Գ. Յակոբեանին՝ Նիւ Եորք.— Գ. Կիրակոսօֆ՝ Յ. Գազանճեանին՝ Ս. Ֆրանչիսկօ.— Տրդատ Պայընդըրեան՝ Խ. Խանզատեանին՝ Քալիֆօրնիա։

ՖՐԷԶՆՈՅԷՆ՝ Գաբրիէլ Տէր Գաբրիէլեան՝ Արմենակ Տէմիրճեանին՝ Հալէպ։

ՇԻՔԱԿՈՅԷՆ՝ Կարօ Գազազեան՝ Թ. Մարտիկեանին՝ Բարիզ։

ԲԱՐԻԶԷՆ՝ Տ. Վռամշ. Եպս. Քիպարեան՝ Ռազմիկ Միութեան՝ Նիւ Եորք։

ՄԱՐՍԷՅԼԷՆ՝ Հայկազն Գույումճեան՝ Ազգ. Վարժարանին՝ Համատոն։


## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

**Հայատառ Թիւրքերէն**

Թիւրքախօս Հայոց կողմէն եղած խնդրանքին վրայ Ս. Գրիգոր Լուսաւորչին հայատառ թիւրքերէն ծանօթ պատմութիւնը, վեցերորդ անգամ ըլլալով լոյս տեսած է Ս. Աթոռիս Տպարանէն, գեղեցիկ թուղթի վրայ, խոշոր տառերով, մաքուր տպագրութեամբ. Գին Մէկ անգլիական շիլին Պաղեստինի եւ Սուրիոյ համար. իսկ Ամերիկեան 25 սէնթ՝ միւս բոլոր երկիրներու համար։ Փոստի ծախքը մեր վրայ։

Տպարան Սրբոց Յակոբեանց


digitised by A.R.A.R.@